105 ՏԱՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆ

08.12.2023 13:28

Փաստաբանական համայնքը տոնեց մասնագիտական օրն ու Հայաստանում փաստաբանության ձևավորման 105 ամյակը:

Հանդիսավոր միջոցառումը տեղի ունեցավ Ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում:

Տոնական միջոցառումը սկսվեց Հայաստանի Հանրապետության օրհներգի ներքո:

Ներկաներին ողջունեց և բացման խոսքով հանդես եկավ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Շնորհավորական ուղերձում ՀՀ փաստաբանների պալատի նախագահը փաստաբանական համայնքի ներկայացուցիչներին մաղթեց աշխատանքային անսպառ եռանդ և տոկունություն՝ անխոչընդոտ կենսագործելու համար ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրենց իրավապաշտպան առաքելությունը:

Շնորհավորական ուղերձներով հանդես եկան նաև Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, Փաստաբանների խորհրդի անդամներ Մարինե Ֆարմանյանը, Գայանե Դեմիրչյանը և Կարեն Մեժլումյանը:

Երեկոյի ընթացքում կարևորված էր փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, հանրային պաշտպանությանը, հանրության իրավագիտակցության բարձրացմանը և իրավական մշակույթի ամրապնդմանն ուղղված աշխատանքները փաստաբանների, միջազգային գործընկերների, Փաստաբանական ակադեմիայի դասախոսների, Զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության շնորհիվ: ՀՀ Փաստաբանության 105 ամյակի առթիվ Փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի կողմից պատվավոր կոչումների և շնորհակալագրերի արժանացան լավագույն համագործակցությունն ունեցած տասնյակ գործընկերներ, ինչպես նաև Փաստաբանական ակադեմիայում ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմություն գրանցած ունկնդիրներ:

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի կողմից շնորհակալագրերի արժանացան.

- **ՀՀ փաստաբանական ակադեմիան՝** Փաստաբանական կադրեր պատրաստելու,

փաստաբանների շարունակական կրթությունն ապահովելու և փաստաբանական ինստիտուտի կայացման ու զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար
- **ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի ղեկավար Ալեքսիս Հաֆթվանը**՝ ՀՀ փաստաբանների պալատի հետ համագործակցության և հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացմանը նպաստելու համար
- **ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի քրեական արդարադատության բարեփոխումների ծրագրի ղեկավար Քրիստինա Աֆոյանը**՝ ՀՀ փաստաբանների պալատի հետ համագործակցության և հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացմանը նպաստելու համար
- **Հայաստանի Ազգային պատկերասրահը**՝ Փաստաբանության օրվան նվիրված միջոցառումների անցկացմանը աջակցելու և Փաստաբանների պալատի հետ արդյունավետ համագործակցության համար
- **Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը**՝ Փաստաբանության 105 ամյակին նվիրված միջոցառման անցկացմանը աջակցելու և Փաստաբանների պալատի հետ արդյունավետ համագործակցության համար
- Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ **Էրիկ Բեգլարյանը**՝ Արցախի Հանրապետության փաստաբանության ինստիտուտի պահպանման և փաստաբանների իրավունքների պաշտպանությանը նպաստելու համար
- Արցախի Հանրապետության Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար **Օլյա Ալթունյանը**՝ Արցախի Հանրապետության փաստաբանության ինստիտուտի պահպանման և փաստաբանների իրավունքների պաշտպանությանը նպաստելու համար
- Արցախի Հանրապետության փաստաբանական դպրոցի տնօրեն **Շուշանիկ Ասրյանը**՝ Արցախի Հանրապետության փաստաբանության ինստիտուտի պահպանման և փաստաբանների իրավունքների պաշտպանությանը նպաստելու համար

- **Հանրային պաշտպաններ Էդուարդ Աղաջանյանը, Լյուդվիգ Ավետիսյանը, Անյուտա Մկրտչյանը, Լուսինե Հարությունյանը, Կարեն Խալաթյանը, Ժորա Պետրոսյանը, Էդգար Թովմասյանը, Վարդուհի**

Խաչատրյանը և Արմեն Վարդանյանը՝ ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակում կատարած բարեխիղճ աշխատանքի և արդյունավետ հանրային պաշտպանություն իրականացնելու համար

- **«Հայկական երկրորդ հեռուստաալիք»-**ը՝ Փաստաբանական ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության, Փաստաբանների պալատի հեղինակային «Փաստաբանի խորհրդով» հաղորդաշարի ստեղծմանը նպաստելու և հեռարձակումը ապահովելու համար
- **Հանրային ռադիոյի «Ռադիոլուր» լրատվական ծրագիրը**՝ Փաստաբանական ինստիտուտի հետ արդյունավետ համագործակցության և հանրության իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու համար
- **«Iravaban.net» լրատվական կայքը**՝ Փաստաբանական ինստիտուտի հետ արդյունավետ համագործակցության և հանրության իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու համար
- **«ARMLUR.AM» լրատվական կայքը**՝ Փաստաբանական ինստիտուտի հետ արդյունավետ համագործակցության և հանրության իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու համար

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի կողմից շնորհակալագրերի արժանացան նաև մի քանի տասնյակ փաստաբաններ և փաստաբանական գրասենյակներ ՝ ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնություններին միանալու, Արցախաբնակ փաստաբաններին աշխատանքով կամ աշխատասենյակով ապահովելու հարցում աջակցության համար.

- **«ՖԻԴԵԼԻՍ»** փաստաբանական գրասենյակ
- **«Կոնցեռն-Դիալոգ»** փաստաբանական գրասենյակ
- **«ՎԻՐՏՈՒՈԶ»** փաստաբանական գրասենյակ
- **«ԻՆԹՐԱ ՎԻՐԵՍ»** փաստաբանական գրասենյակ
- **«Զոհրաբյան և Գործընկերներ »** փաստաբանական գրասենյակ
- **«Բալաբեկյանս»** փաստաբանական գրասենյակ
- **«Հալուլյան»** փաստաբանական գրասենյակ
- **«Հայրապետյան»** փաստաբանական գրասենյակ
- **«Բեստ Սոլուշնս»** փաստաբանական գրասենյակ
- **«Ունիվերսալ Բիզնես Սոլուշնս»** փաստաբանական գրասենյակ
- **«Արեգ-Արդ իրավաբանական ընկերություն»**

փաստաբանական գրասենյակ
- **«Լեգելատա»** փաստաբանական գրասենյակ
- **«Վիրտուլեքս»** փաստաբանական գրասենյակ
- **«Ավետիսյան լեգալ քոնսալթինգ»** փաստաբանական գրասենյակ
- **«Լեգալ Սփորթ»** փաստաբանական գրասենյակ
- **«Մուղնեցյան»** փաստաբանական գրասենյակ
- **«Ն.Ա.Ն. ԽՈՒՄԲ»** փաստաբանական գրասենյակ
- **«Լիդեր ընդ քո»** փաստաբանական գրասենյակ
- **Արթուր Խաչիկյան**
- **Հայկ Հարությունյան**
- **Երեմ Սարգսյան**
- **Վարուժան Ավետիքյան**
- **Մարատ Կոստանյան**
- **Սպարտակ Մուշկամբարյան**
- **Լիդա Հակոբյան**
- **Կարո Միքայելյան**
- **Արմեն Օհանյան**
- **Հայկ Սողոմոնյան**
- **Էմին Խաչատրյան**
- **Ադելինա Հակոբյան**

ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանին հանդիսավոր կերպով շնորհվեց **«Փաստաբանական ակադեմիայի պատվավոր անդամ»** -ի կոչում՝ շնորհը հանձնեց ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը: Իր խոսքում Արա Ջոհրաբյանն ընդգծեց, որ խորհրդի որոշումը կայացվել է **նկատի ունենալով Սիմոն Ալբերտի Բաբայանի՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի զարգացման, գործունեության բարելավման գործում ունեցած բացառիկ վաստակը**: Արա Ջոհրաբյանն իր խոսքում ընդգծեց նաև լուսահոգի Ռուբեն Սահակյանի ներդրումը ՀՀ փաստաբանական ակադեմիայի (դպրոցի) կայացման և փաստաբանության ինստիտուտի զարգացման հարցում:

Նշենք, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը երկար տարիներ՝ 2014-2021թթ. եղել է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանի կողմից՝ ունկնդիրների մասնագիտական ուսուցման գործընթացում երկարամյա (առնվազն 10 տարվա) բարեխիղճ աշխատանքի, նշանակալի հաջողությունների և ակնառու վաստակի համար, ինչպես նաև փաստաբանության 105 ամյակի առթիվ **«ՀՀ փաստաբանական ակադեմիայի պատվավոր դասախոս»** կոչմանն արժանացան դասախոսներ՝

- **Արսեն Նիկողոսյանը**
- **Գնել Մուղնեցյանը**
- **Նարինե Մանասյանը**
- **Կարեն Մեժլումյանը**
- **Ստեփան Միքայելյանը**
- **Իռեն Սարգսյանը**
- **Արսեն Այվազյանը**

Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների, որպես ապագա փաստաբանների գործնական հմտությունների ձևավորման նպատակով կազմակերպվող ուսումնական գործընթացի (փորձաշրջանի) ղեկավարման հարցում ՀՀ փաստաբանական ակադեմիայի գործունեության մեջ նշանակալի ավանդ ունենալու համար շնորհակալագրերի արժանացան փաստաբաններ՝

- **Մաի Հակոբյանը**
- **Լիլիթ Սահակյանը**
- **Սերգեյ Մանուկյանը**
- **Անննա Ջուվանովան**
- **Հունան Բաբայանը**
- **Աշոտ Նուրիջանյանը**

ՀՀ փաստաբանական ակադեմիայի 2022թ. աշնանային և 2023թ. գարնանային հոսքերի քաղաքացիաիրավական և քրեաիրավական ուղղվածության խմբերում լավագույն առաջադիմությունը ցուցաբերելու համար Ակադեմիայի ռեկտորի կողմից **«Լավագույն առաջադիմություն»** անվանակարգում մրցանակի արժանացան ունկնդիրներ՝ **Գրետա Արթուրի Սիմոնյանը** և **Կլարա Ռուբենի Գասպարյանը**:

Միջոցառման ընթացքում անակնկալ ելույթով հանդես եկավ նաև Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Էրիկ Բեգլարյանը: Ելույթի ընթացքում ԱՀ փաստաբանների պալատի նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀ փաստաբանների պալատին և ՀՀ փաստաբանական ակադեմիային՝ մշտապես Արցախի գործընկերներին ձեռք մեկնելու և աջակցելու համար:

Իր ելույթում Էրիկ Բեգլարյանը հայտնեց, որ Արցախի փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ **ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանին** և **ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանին** շնորհվում է «Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի **պատվավոր անդամ»-**ի կոչում՝ **տարներ ի վեր Արցախի փաստաբանների իրավունքների պաշտպանության, փաստաբանական ինստիտուտի կայացման ու**

զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և մեծ նվիրումի համար:

Երեկոյի մշակութային հատվածն ապահովում էին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ուսանողները՝ ժողովրդական գործիքների նվագակցությամբ:

Միջոցառումն ավարտվեց փաստաբանների հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման արարողությամբ:

Փաստաբանական համայնքը համալրվեց 106 նոր անդամներով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })